

ՅԱԻԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ.

Խ Ո Ս Ր Ո Վ

Գ Ա Ն Ձ Ա Կ Ե Յ Ի

Խոսքով Գանձակեցու վկայութեան պատմութիւնը ունէինք մենք Յայսմաւուրքում* առանց տարեթուի և Եգեբրեանն իւր ընդարձակ Սրբոց—Վարքում (Տատր 12-դ) համառօտում է այս նահատակի պատմութիւնը, առնելով Յայսմաւուրքից, Չգիտեմ որտեղից է Եգեբրեանն մէջ բերած այս վկայի նահատակութեան սխալ թուականը՝ «յամի 1399—ՊԻԸ», նահատակութեան ճիշտ թիւը շատ աւելի կանուխ է, Հայոց ՈԺՁ—1167 Փրկչ.:

Մեր հրատարակած այս վկայարանութիւնը ժամանակակից գործ է և նոյն 12-դ դարի ձեռագրից, Այդ ձեռագիրը մեր մատենադարանի № 939:6 ձառընտիրն է, որի մասին ընդարձակ գրելու արդէն առիթ ենք ունեցել (տես մեր «Ազատականագիտութիւնը և Վրաստանի» յօդուածը, Արարատ, 1896, սեպտ.), ձառընտրի գրութեան թուականը, ինչպէս կարծում ենք ապացուցած լինել, է ԱԼԵ—ԱԼԶ [=1187], ուրեմն հազիւ քսան տարի նահատակութիւնից յետոյ:

Վկայարանութիւնը նահատակութիւնից միայն մի քանի տարով ուշ է գրուած, Վկայարանութեան հեղինակը, թէև ոչ ականատես նահատակութեանը, սակայն ականատես է սրբի նշխարների տեղափոխութեանը. «եսկ զինի անցելոց երկուց ամաց փոխեցաւ ի մատուռն ի նոյն տեղու զերեզմանացն, եւ ի փոխել նորա ականատես ելաք, զի ոչ էր այրեալ կապանք ձեռացն և ոչ մազ մի ի գլխոյն ծախեալ»:

Վկայարանութիւնից յետոյ գնում ենք միևնոյն ձեռագրից Մխիթար Գոշի ներբողեանը, զըժբաղդաբար թերատ և պատառօտուն, ներբողի պատմական մասը առնուած է վկայարանութիւնից և մեզ թւում է հաւանական, որ վկայարանութեան հեղինակն էլ նոյն ինքն Մխիթար Գոշն է, որն և հաւանականաբար առաջին անգամ կարգեց կատարել Խոսքով Գանձակեցու տօնախմբութիւնը, ինչպէս այդ երևում է ներբողեանի ակնարկներից, Հատհին ժամանակներից սովորութիւն էր, որ վկաների յիշատակի օրը կարդացուած էր նրանց նահատակութեան պատմութիւնը և ապա ներբողեան կամ գրուատ: Սովորաբար թէ ներբողեանի և թէ վկայարանութեան հեղինակը միևնոյն անձն էր լինում: Բաւականանաք իբրև օրինակ յիշելով Խորենացու անուամբ մեզ հասած Հռիփսիմեանց Պատմութիւնը և նոյն կոյսերի ներբողեանը:

ձառընտրի համալ գրչին՝ Մխիթարին՝ պէտք է վերագրել տեղ տեղ պատահող լեզուի անհարթութիւնները և ոչ թէ հեղինակին՝ Մխիթար Գոշին:

Մի հատուած ներբողեանում կարօտ է բացատրութեան, Գոշը բառախաղով Մահմետին առնանում է Էետ մահու, այն է՝ ձանապարհ կամ շաւիղ մահու: Մահումետ—մահու հետ: Այս միտքով պէտք է հասկանալ, իմ կարծիքով, ներբողեանի ասացուածը. «և [ոչ] հաւանիմ մոլար ձեր օրինացք և զհետ գամ հետին մահու, զի այդ է անուն մոլորեցուցչին ձերոյ»:

Մեր ազգի պատմութիւնը, ահա 1200 տարի է, մի անընդհատ կռիւ է, մի արիւնտտ և անհաւասար ուժերով պատերազմ մահմետականութեան դէմ: Այդ կռուում ընկած նահատակները՝ բացի սրբեր լինելուց Բրիտտոսի եկեղեցում՝ մեր պատմութեան ամենափառաւոր հերոսներն են:

Մի ուսմիկ գիւղացի տղայ, առանց առուտուրի մտնելու իւր խղճմտանքի հետ, առանց հրապուրուելու զանազան խոստումներից, յանձն է առնում մահ, հաստատ մնալով իւր համոզմանը, Ահա մարդկային գործերից ամենից բարձրը, ամենից վեհը. . .

Գանձակ քաղաքում, նրա եկեղեցիներում և նրա շրջակայքում, երևի պահուած կըլինի այս նահատակի յիշատակն ու անունը: Մեր հրատարակութեան նպատակն է, բացի մատենագրական—պատմական խուզարկութիւնից, նորոգել այդ յիշատակը:

ԳԱՂՈՍԱՏ Տ. ՄԿՂՈՒՆԵԱՆԻ
25 դեկտ. 1896.

Վ Կ Ա Յ Ո Ն Թ Ի Ն Ն

Ս Ր Բ Ո Յ Ն Խ Ո Ս Տ Ր Ո Վ Ո Ւ

Մ Ե Յ Ե Ի Փ Ա Ռ Ա Ի Ո Ր Ե Ա Լ [Վ Կ Ա Յ Ի Ն]

Ո Ր Կ Ո Չ Ի Ն Ո Ր Ն Ա Ը Ա Յ Ա Կ

Ո Ր Վ Կ Ա Յ Ե Ա Յ Յ Ա Շ Ա Ր Ը Ն Ա Լ Ո Ւ Ա Ե Ի Ց Ի Մ Ո Ր Ո Ւ Ք Ա Ղ Ա Ք Ի

Ո Ր Կ Ո Չ Ի Գ Ա Ն Ձ Ա Կ

[Զ . Է Ղ 479Ե]

Ի ժամանակս բռնակալութեան [Ծ]ղեմացոց, յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց իսպառսպուռ, և անտերունչ* շրջէին մնացորդք իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհս վարատեալ[Լ]ք, ոչ հնա-

* իմ ձեռքում եղած Յայսմաւուրքը դնում է յուլիսի 5-ին, Ազգերեանց յուլիսի 2-ին:

* Զ. Ազգերեանց.

զանդելով միմեանց, մանաւանդ այնքիկ, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ, աւազակարար կելով ի լեբրինս և ի զերծ տեղիս, և յանցս ճանապարհաց նստելով առնուին կապուտ կողպուտ յամենայն ազգաց, յորս յազթե(ա)լն կարէին: Եւ նեղութիւն ոչ սակաւ հասուցանէին քրիստոնէից, հարկս խնդրելով: Ջոր ի դէպ է այժմ և մեզ սակ: Ոչ գոյ ի ժամանակի յայսփի իշխան և առաջնորդ որ հովուէ: և այլն:

Չայնակցէ մարգարէն ողբոցս: Առնոյր առնէր որ զգլուխս իմ իշտեմարանս ջուրց և զաչս իմ աղբիւր արտասուաց, զի նստե[ա]լ լայի ի տուէ և ի զիշերի զթշու[առու]թիւն ազգիս մերում և զցրուեայն ընդ ամենայն ազգս վաճառակուր լեալ: Եւ ոչ կացեալք ի կայի,* այլ ըստ նմանութեան ալեաց ի մրրկաց ծովու յուզեալք, և ոչ հասեալք ի նաւահանգիստ: Քանզի ինքեանք զայն ատորժեցին վասն առաւել նենգաժետութեանն և կրթի վիղծ բարուց իւրեանց, որք լաւ համարէին ի սորկութեան կալ ամենայն ազգաց, քան թէ հնազանդել միմեանց և կեալ յազատութեան: Վասն այսորիկ նեղեցան և տառապեցան յանաւրէն և յամբարիշտ ազգաց, յորդուց Քետուրոյ և իսմայէլի, և յԵղեմացուց: Որոց առաւել ծանր էր քան զերկաթ լուծ անրոյ նոցա ի վերայ քրիստովնէից, մանաւանդ յաշխարհին Պոնտացուց, որ վասն առաւել հարկապահանջութեանն վաճառէին զորդիս իւրեանց և տային ի զինս փրկանաց անձանց: Եւ բազում էր ամպրոպ խռովութեան ամենայն ուստեք յամենայն տեղիս: Քանզի զաստուածաշէն եկեղեցիս, որ փոխանակ դրախտին տուան** մեզ տապալէին, զվանորայս ի հիմանց քակէին, զմատրունս վկայիցն անասնոց տեղի պատրաստէին: Չպատուական արս անարգէին, և իմաստունքն յոչինչ համարեալ լինէին: Եւ բազումք ի քրիստովնէից թուրանային ի հաւատոց ըստ յառաջագոյն գուշակելոյն Պաւղոսի, եթէ ի ժամանակս յետինս քահտեսցին մարդիկ ի հաւատոց, և հայեացին յայս[ս] մոլորութեան:*** ա՛՛

և թագաւորն Վրաց, որ էր սահմանակից տանն Ալուանից, կամեցաւ անբնակ առնել զաշխարհն ի մարդոյ և յանասնոյ, [480a] մանաւանդ զերբրի և զարգաւանդ* երկիրն Ռուտացուց յաւեր դարձուցանէր: Եւ այս լինէր վասն ծովացեալ մեղաց մերոց, որք ոչ վարեցաք ըստ իրաւանց և ըստ արդարութեան: Քանզի հայրապետք արծաթով առնէին ձեռնադրութիւնս, նոյնպէս քահանայապետք և քահանայք: Որպէս ասաց Ծայր՝ Քահանայն և մարգարէն յիմարեցան: Եւ յայնչափ յանդգնութիւն հասին, մինչ զի և մարդիկ աշխարհական, որ ոչ ունէին զաւճումն քահանայութեան, այլ և կանայք նոցա վերաանուէք լինէին եկեղեցեաց: Եւ ամենայն որ համարձակ գործէր զարիս և ոչ ուստեք երկիւղ, և ոչ յանդիմանութիւն:

Յայսպիսում ժամանակի յանկարծակի ծագեաց իրրե զաստղ մեծապայծառ նոր վրկայն Քրիստոսի յԾոստրով: Բայց աւրինակ վկայութեան նորա է այսպիսի: Ըր սուրբն յԾոստրով քրիստովնեայ ի քրիստովնեայ ծնողաց, յաշխարհին Առանայ հուպ ի քաղաքն, որ կոչի Գանձակ: Եւ տակաւին մանուկ գուլով** ուշիմ և հանդարտ կայր զգուշական կենաւք: Իսկ բարխատեացն սատանայ, որ մարտեաւ ընդ Արամայ ի ձեռն կնոջն, յարոց պատերազմ ի վերայ պատանւոյն այսպիսի աւրինակաւ: Այր մի ի փոքունց և յաննշանից պարսիկ, որ բնակեալ էր ի գաւառին Առանայ առ սահմանաւք ժառանգութեան քաղաքին մեծին Գանձակայ, ի գեղի միում Արխանաշէն կոչեցեալ: Կէսքն ի նոցանէ քրիստովնեայք էին, և կէսքն հեթանոսք, բարեկամք և սիրելիք գորով միմեանց ըստ մարմնոյ: Եւ ունէր պարսիկն ուստերս և գտերս, այլ յայլմէ ծնեալք ի կնոջն: Իսկ մի յորդ[ւ]ոց նորա ցանկացեալ քեռն իւրում որ ոչ էին համահայր, որ և բռնադատե[ա]լ զայլիկն*** շտացաւ, և յլանայն երկեաւ յոյժ, մի գուցէ իմացին ծնողքն և սպանցեն:

Բայց զի յառաջագոյն տուփեալ էր նա պատանոյն յԾոստրովու, զի էր ամենազեղեցիկ

* 2. ի սահ՝ կամ ի կահ՝ Մ=Կ. այս տառերը քոչորովն նման:
 ** 2. տուաւ.
 *** 2. եւ հայնսցին յայս մոլորութիւնս նմանու. Ա. Տիմ. Դ. 1.

* 2. զարգեանտ.
 ** 2. գովով.
 *** 2. բռնայղատու.

տեսլեամբ, խարտե[ա]շ հերով կարմիր և սպի-
 աակ գունով: Եւ զի էին դրացիք միմեանց և
 միշտ տեսանէր ի մտանելն և յեկանել՝ և լի-
 նէր յորժամ հանդիպէր մանկանն առանձինն,
 բանս պատիրս փաղաքշելով խաւսէր ընդ նմա,
 զի թերևս կարասցէ զդորել զնա: զի մի՛ յայտ-
 նեացին դործք նոցա չարութեանն և սպան-
 ցին: Եւ զայս առնէր ոչ մի անգամ՝ այլ բա-
 զում անգամ:

Իսկ պատանւոյն սրբասիրի և ողջատոհմի,
 ոչ խոտորե[ա]լ ամենեկն ի բանս աղջկանն,
 այլ կայր և հանդիսանայր ընդդէմ չարին,
 որպէս Թովսէփն այն ի հնուամն կամ ևս վե-
 հագոյն ասել: Եթէ ոչ յանդգնութիւն իցէ,
 քանզի նա յետ այնր առաքինութեան ընդ
 ամուսնութեան արինաւ ք եմուտ և մանկունս
 ծնաւ զԾփրեմ և զՄանասէ: այլ սա զայժ-
 մու ժամանակիս վանցուցեալ արութեամբ,
 եմուտ ի սղատաղիոնն առնելով ըզբ[ը]արիոնն
 յաղթութեան:

Իսկ իբրև գիտաց հայր աղջկանն* [480b]
 եթէ յղի է գուսարն նորա ի շնութենէ, ի խոշ-
 տանգանս** արկանէր զդու[ս]արն և հարցա-
 նէր. Ո՞վ բռնադատեաց զքեզ ասա ինձ: Իսկ
 գուսարն սատանայի և հին զէնն, որ ըստ
 իւրաքանչիւր ժամանակաց բազում չարեաց
 պատճառ եղև մարդկան ազգի, զրպարտեաց
 զմանուկն Խոստորով կարծելով եթէ այնու
 պատճառաւ աղատիցի և զկամս ցանկութեանն
 լցցէ: զի խոշտանգեալ*** ուրասցի և առցէ զնա
 ի կնութիւն:

Վա[ս]ն այսորիկ մատնի դատաւորին բա-
 րէ յաղթ վկայն Բրիստոսի Խոստորով: Եւ հրա-
 մայեաց արկանել զնա ի բանդ. և կացեալ
 ի բանդին ամսաւրեայ աւուրս սակաւապէ-
 տութեամբ, անսուաղ անցուցանելով և աւրհ-
 նելով զաստուած:

Ես հրաման դատաւորն զկնի աւուրցն
 այնոցիկ հանել զնա ի բանդէն: Եւ եկեալ
 ծնաւդք սրբոյն առաջի արկանէին զալիս
 զձերութիւն, զհոգեխառն սնունդն, որով զնա
 սնուցին:

Եւ մայրն ասէ. Ողորմեա՛ թշուառացեալ

* 2. աղջկանն.
 ** 2. խոշտանկանս
 *** 2. խոշտանկեալ.

մաւրս և մի՛ մատնիր ի ձեռս արիւնարբու
 գազանացն: Ծոյնպէս և հայրն աղիողորմ՝ ար-
 տասուաք և հառաչանաւք ասէր. Եանձն
 առ որդեակ առաջի տտենին, և միայն զեր-
 ծիր ի տանջանացդ և ի մահուանէդ: Եւ տար-
 ցուք զքեզ յաշխարհն Վրաց, և անդ համար-
 ձակութեամբ պաշտեա զԲրիստոս:

Իսկ նորա ի բաց դարձուցեալ զերեսն՝ ոչ
 ընգունէր զասացեալսն ի նոցանէն: Եւ իբրև
 գիտացին զհաստատուն և զանյողողոցելի մի-
 տըս մանկանն, ի բաց գնացին լալով: Եւ
 զայս լուեալ դատաւորն ասէ. Երեւեսցուք սմա
 սակաւ աւուրս զի թերևս խրատեալ եկեացէ
 յուղղութիւն: Եւ դարձեալ հրամայեաց ար-
 կանել ի բանդ, և խորհէր թէ զինչ արասցէ
 սրբոյն: Եւ կացեալ ի բանդին այլ ևս աւու-
 րըս ութ՝ ոչ եկեր և ոչ արբ յաւուրսն յայ-
 նոսիկ: Եւ ի կատարել աւուրցն այնոցիկ հրա-
 ման ետ և աժիւն առաջի դատաւորին:

Խաւսել սկսաւ դատաւորն և ասէ. Խոստ-
 րով մի՛ մոլորիր տարապարտուց, Դարձիր և
 հաւանեա և տաց քեզ ոսկի բազում և զաղ-
 ջիկն զայն ի կնութիւն և այլ ևս մեծութիւն:
 Ապա թէ ոչ կամիցիս լսել ինձ՝ բազում և
 անհնարին տանջանաւք չարչարեցից զքեզ:

Սուրբն ասէ. Պարզեք քո ընդ քեզ լիցի
 ի կորուստ. ես Բրիստոսի հաւանեալ եմ ի-
 մում թագաւորիս, որ արար զերկիկնս և զեր-
 կիր, զձով և զամենայն որ ի նոսա:

Դատաւորն ասէ. Խնայեա ի մանկութիւնդ
 քո և արա զոր ասեմ քեզ. լի՛ր ընդ մեզ և
 որդի իմ կոչեսցիս, և կեաց. ապա թէ ոչ
 սպականեմ զքեզ քո վայելուչ:

Սուրբն Խոստորով ասէ. Ասացի քեզ և
 դարձեալ ասեմ, եթէ ոչ եմ լսելոց ձերոց
 յաւապատիր խաբէութեանցդ. զի թէ վաղ
 և թէ անագան, սակայն մեռանելոց եմ:

Դատաւորն ասէ. Հրով այրեցից զքեզ,
 եթէ ոչ դարձցիս յայդպիսի յամառութեանց:
 [481a] Խոստ[ը]ով ասէ. Ոչ կարես այնպիսի
 հուր պատրաստել, զոր Բրիստոս պատրաս-
 տեալ է մեղաւորաց և այնոցիկ, որ իլլիւ զձեզդ
 իցեն ամբարիշտք:

Դատաւորն ասէ. Գոնեա հաւանեա Մահ-
 մետի, որ զայս աշխարհս ետ մեզ և անդ
 զդրախտն:

Սուրբն ասէ: Ձկննդանին ուրանայ տաս
ինձ և մահկանացուաց երկիր պագաննէր որ
ինքեանք մոլորեցան և զձեզ մոլորեցուցին
յուզիդ ճանապարհէն:

Եւ բարկացեալ դատաւորն հրամայեաց
երկուց զինուորաց կապել զերանելին ձեռս
յետս և զնել անուր երկաթի ի պարանոց նո-
րա և շրջեցուցանել ընդ քաղաքն ի տեսիլ
առակին: Եւ բազումք ի հեթանոսաց զարմա-
նային ընդ համարձակութիւն և ընդ անփո-
փոխելի միտս սրբոյն և թէ որպէս անոտի
յուսով մեռանի:

Ձկնի այսորիկ եհատ ի վերայ նորա դա-
տաւորն վճիռ: զի քարկոծ լիցի գիտացեալ
զհաստատուն միտս նորա:

Եւ առեալ զնա ամբոխին՝ հանին արտա-
քոյ քաղաքին ընդ կողմն հիւս[ի]ւտոյ ի տե-
ղի մի քարուտ: առ եղբր գետոյն ցամաքե-
լոյ: Այլ և քրիստոփնեայք: որ էին ի քաղա-
քին, երևելս առնէին զմիմեամբք թագնաբար:
զի տեսանն զնահատակութիւն սրբոյ վկային:

Եւ իբրև ածին զերանելին ի տեղին՝ ուր
հանդերձեալն էր կատարիլ խաւսել սկսան
զարձեալ ըստ հրամանի դատաւորին և ասն
ցուրբն: Մի՛ յամառիր իբրև զմանուկ այլ
լուր մեզ և արա զկամս դատաւորին: և մեք
աղաչեմք զի ներեսցէ քեզ միայն հաւանեա
ղենիս մերում և թողցէ քեզ զամենայն անար-
գանսն: զոր յաճախեցեր առաջի նորա:

Աս է սուրբն: Ո՛ւմ արդեաւք տայք ինձ
երկիր պագանել, կախարդի՛ն և մոլորականի՛ն
և մեռեալ շանն:

Եւ մրմռեալ իբրև զգազանս վայրենիս և
կրճտեալ զստամոռնս իւրեանց ի վերայ նորա՝
գան հարկանէին զնա յանխնայ: Եւ կապեալ
զնա ընդ ծառոյ միոյ թթենոյ—բայց յառաջ
քան զկապելն ծուր կրկնեալ կայր յաղաւ-
թըս և ասէր: Զքեզ Զքրիստոս փառաւորեմ
հանդերձ հարր և ամենասուրբ Հոգ[ւ]ովդ—
և բարբառոսացն զրգոեալ զմիմեան[ս]՝ քա-
րաձիգ լինէին ի սուրբն: և կայր երանելին
իբրև զգառն ի մէջ գայլոց: Ոչ ոք էր որ ո-
ղորմէր, և ոչ ոք որ ի թիկունս հասանէր:
այլ ամենեքեան յեկացն և ի բնակացն Պար-
սից: իբրև շունք կատաղեալք, թափէին ի նա
զնոսս յանդիմանութեան:

Եւ ի թանձրութենէ քարանցն: որ իբրև
զտեղատարափս զեղուին ի վերայ սրբոյն՝ ջախ-
ջախեալ առհասարակ ոսկերքն և յաւղքն
քակտեալ ի միմեանց, և պատառ պատառ
մարմինքն յերկիր անկանէին: Եւ սուրբն ա-
ւանդեաց զոգին ի փառս Աստուծոյ, ըստ գրե-
ցելուսն: Ոգիք արդարոց ի ձեռին աստուծոյ
նո:

[481b] Եւ ապա յետ այսորիկ հրաման
ետ բռնաւորն և եղին առասան ի պարանոց
երանելոյն և [ետ] քարշել ընդ հրապարակս ար-
տաքոյ քաղաքին փողոցացն քրիստոփնէից:
իբրև յաղթութիւն մեծ զիրսն համարելով:

Իսկ զկնի այսորիկ եմուտ սատանայ ի
սիրտ բռնաւորացն: զի հրով այրեցցեն զմար-
մինս երանելոյն, և ընկեցեալ ի հուրն ոչ այ-
րեցաւ: Եւ ի գիշերին յայնմիկ եկեալ ծնողք
սրբոյն բարձին զնշխարս վկային և եղին
ի հասարակաց զերեզմանս քրիստոփնէից զեղ-
ջըն: անգիտանալով զարժանիս վկային միան-
գամայն և զարհուրելով ի բռնաւորացն:

Իսկ զկնի անցելոց երկուց ամաց փոխե-
ցաւ ի մատուռն ի նոյն տեղ[ւ]ոջ զերեզմա-
նացն:

Եւ ի փոխել նորա ականատես եղաք: զի
ոչ էր այրեալ կապանք ձեռացն, և ոչ մազ
մի ի զլիտոյն ծախեալ: Որ և նշխարք վկային
յերկաքանչիւր տեղիսն առնէր բժշկութիւնս
բազումս ի փառս աստուծոյ: վասն զի զփա-
ռաւորիչս իւր փառաւորէ աստուած աստ և
ի հանդերձելուսն:

Բայց եկեցուք և ի տեսիլ սքանչելի*
լուսոյն: որ երևեցաւ ի վերայ նշխարաց սրբոյ
վկային: երևեալ ոչ հաւատացելոց միայն, այլ
և անհաւատիցն: Ոչ միանգամ այլ և երկի-
ցըս: Եւ է աւրինակ առաջնոյն այսպիսի:

Սովոր իսկ էին պարսիկ[ք] զեղջն յա-
ւուրս պահոց իւրեանց բերել աղաւթակոչ:
զի ի գիշերի ձայնիւ զարթուացէ զնոսս յա-
ղաւթս: նմանապէս և ի տուրնջեան ժողովի-
ցէ:

Եւ եկեալ մշակն անաւրէնութեանս գային
արաբացի, ի գիւղն ուր էր հանգստարան սրբ-
ոյն Խոստ[ր]ովու: և յարուցեալ ի գիշերի
միում: կամեցեալ զուրացութեան բարբառն

* 2. զքարեն:

հնչեցուցանել առ նոսաւ երանէ ի տեղի մի բարձրաւանդակ և տեսանէ նշան սքանչելի ի վերայ գերեզմանի սուրբ վկային, լոյս սաստիկ որ առաւել զանցանէր զլուսաւորութեամբ արեգականն: Եւ յահէն ըմբռ[ն]եալ ոչ կարէր ամենեւին խաւսել, այլ անկեալ դնէր կիսամեռ մինչև ցառաւաւտն: Եւ ի վաղիւն եկեալ գտին զնա զի կայր անշունչ իբրև զմեռեալ: Ապա հարցանէին զնա պարսկաստան[ե]այքն, եթէ ի գիշերիս յայտիկ ընդէր ոչ յարեար և զմեզ յարուցեր, զի վասն այնորիկ կոչեցաք զքեզ, զի աղաթս արասցես և զմեզ յորդորեացես:

Իսկ նա հազիւ ուրեմն ուշարերեալ, ** կաց պատմեաց զտեսիլ գիշերոյն և նորա յոյժ զարմացան, և երթեալ պատմեցին դատաւորին: Եւ դատաւորն սաստեալ ի վերայ նոցա, զի մի՛ յայտնեացն զսքանչելի տեսիլն մեծ, զոր տեսին: Եւ առաքէր զմի ոմն ի ծառայից իւրոց զանխլարար պատուէր տուեալ, զի մի՛ ոք գիտացէ: Եւ եկեալ ծառայն ըստ հրամանի դատաւորին հսկէր զգիշերն ամենայն, և տեսանէ ի մէջ գիշերի լոյս համապայծառ ի վերուստ փայլեալ ի վերայ հանգստարանի սրբոցն: Եւ յահի եղեալ և ի դողման՝ ոչ զաւրէր նայել ընդ ճառագ[482a]այթս լուսոյն, որ երևեցաւ: Եւ ի վաղիւն ահիւ և դողութեամբ երթեալ ի քաղաքն պատմեաց զտեսիլն մեծասքանչ և զարմանալի: ** Իսկ պիղծ և անաւրէն դատաւորն զանալ կամեցաւ զգրանչելի մեծութիւնն, զոր լուաւ ի ծառայէն, նոյնպէս և զառաջինն՝ զոր ի բազմաց լուաւ:

Յետ այսորիկ ոմանք յանհաւատից ըստ պատահման հատին զժառն, յորում կապեցաւ սուրբ վկայն, զի այրեացն: Եւ տեսեալ քահանայի միոյ՝ ետ փոխանակ փայտ յայրել և առ և զկարծիս առեալ ոչ տային: Եւ պատճառաւ հաւանեցուցանէր, և ուրախ ևս լինէր, զի և յառաջ իսկ կամէր և ոչ իշխէր, և այս ի տեսունէ պատահէր: Եւ տարեալ եդ ի գաւիթս եկեղեցոյն, և բազում բժշկութիւն առնէր կեղև նորին յառաջ և զինի հատանելոյն: Բազումք և յանհաւատիցն առնուին ի բժշկութիւն:

Զինի ինչ աւուրց անցանելոյ՝ տե-

** 2. ուշարերեալ.
** 2. զարմանանալի՝

սեալ ի հեռաստանէ հաւատացեալք լոյս իջեալ ի վերայ գաւթին, և եկեալ պատմէին քահանային: Եւ այլք ի հաւատացելոց տեսիլս պատմէին, որ մերձ էին յեկեղեցին, եթէ աւեր ի տեսլան գիշերոյ՝ եթէ Զիս խաչ ձեացուցեալ աւրհնեցէք և անուն զիք սուրբ Ստեփանոս: Եւ լուեալ զայս քահանայն անյապաղ կատարէր: Եւ զկոփուածս փայտին զբաւանդակն առնուին ի բժշկութիւն, որովք ոչ սակաւ բժշկութիւն կատարէր Տէր ի փառս իւր և ի գովութիւն վկային՝ կուրաց և այլոց անտից:

Իսկ զզրպարտիչ վկային, զկինն պիղծ, դատապարտեաց Տէր աստէն ըստ արժանի իւրոյն գործոյ: Քանզի ծնաւ ծնունդ այլանդակ, խառն ինչ մարդոց և զազանի, և ի նմին սատակի, որով և ծանուցաւ բազմաց հաւատացելոց և անհաւատից արգարադատութիւն աստուծոյ: Եւ այլքն ևս չարաչար կրեցին անցս ազգատոհմ նորուն կնոջ, ոմանք ի դիւէ լըկեալք, և այլք բնաւին բարձեալ եղեն մահուամբ, և ոչ մնաց և ոչ ոք յազգատոհմ նորին:

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի յաշխարհին Առանայ ի մայրաքաղաքին որ կոչի Գանձակ, ի թուականին ՌԹԶ. յամենան արաց, յերբորդ աւուր, ի զլուս յիսնեքեկի պահոց Արարավառին, ի թագաւորութեանն յունաց Կեւռ Մանուիլի, և յիշխանութեանն հայոց Թորոսի, որ էր պատուեալ կեսարոսական պատուով ի թագաւորէն յունաց, և ի վրաց՝ Գեորգե[այ] և յիշխանապետութեանն Հասանայ որդոյ Ախթիւնայ կողմանցն յաչենոյ: * Ի հայրապետութեան տեսան Գրիգորիսի և Ներսիսի հարազատ եղբարց Հայոց Մեծաց: ** Եւ տանն Աղուանից տեսան Ստեփանոսի, և տէր Յոհանիսի եպիսկոպոսի քաղաքին Գանձակայ:

Եւ յիշխան[ա]պետութեան Արևելիցն Ելտիզիլին, և ի թագաւորութեանն Եղեմացոց և Պարսից՝ Արանշահի: Իսկ ի մեզ թագաւորելոյ Յիսուսի Քրիստոսի տեսան մերոյ, որ [482b]ում վայելէ փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

* 2. խաչելոյ՝.
** 2. հառց մեծաց՝ կամ հարց մեծաց՝: N=P:
ժան Մխիթար Գոշի ներքոյն տեղի սղութեան պատճառաւ մնաց յաջորդ համարին: ԽՄԲ.